ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

16 մայիսի 2011 թվականի N 29 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ <<ԻՋԵՎԱՆԻ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2011 թվականի մայիսի 3-ի թիվ 01/14.22/1162-11 գրությունը՝

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մարտի 18-ի N251-Ա որոշմամբ լուծարվող Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի <<Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունում գույքագրում կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կարինե Դովլաթբեկյան - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Սամվել Քամալյան - Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ

Հովհաննես Վարշամյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

Ժորա Խաչատրյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության

առաջին կարգի մասնագետ

Խաչատուր Ցուցուլյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

2. Հանձնաժողովին՝ 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի <<Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունում կատարել գույքագրում և գույքն ու համապատասխան փաստաթղթերը սահմանված կարգով հանձնել լուծարման հանձնաժողովին:

3. Սույն կարգադրության հսկողությունը դնել ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ֆ. Ափինյանի վրա:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

16 մայիսի 2011թ.
ք. Իջևան